



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 4150
Մարտ 29, 1962

Բարեջանորհ
Ներսէս Արկ. ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար եւ Նախագահ Միական Խորհուրդի
Գլխավէտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքի

Սիրելի Ներսէս Սարկաւազ,

Ստացած ենք ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Արժ. Տ. Առնակ Զհնյ. Գասպարեանի նախագահութեամբ 1962, Յունուար 14ին զու-մարուած համայնքիդ Միական ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմա-կան Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Եկեղեցւոյդ պարտաւանաչ ու Նուիրեալ անդամներ, կը վայելեն ձեր Համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.

Տիկ. Ռօզ Ազարեան
Տիարք. Վահան Կարապետեան
Ալէքս. Պաղտասարեան

Կը յանձնարարենք որ առաջին առիթով Առաջնորդարան ղրկէք ձեր Միական Խորհուրդի նոր ղիւանի կազմի անուն-հասցէները:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզք եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր զործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի